


ԶԻՐԱՐ ՀԱՍԿՆԱԼ

Կարդա՛ Սուսկաց 16.16-22

Ամուսինի մը համար լաւագոյն ձեւերէն մէկը իր կինը սիրելու՝ զայն հասկնալն է: Պետրոս առաքեալ կ'ըսէ, թէ շատ կարեւոր է ամուսինի մը համար «Բնակիլ (իր կնոջ հետ) գիտակցութեամբ» (Ա. Պետ.3:7): Այս սկզբունքը գործնական է երկուստեք: Ամուսիններ ալ նոյնպէս կ'ուզեն հասկրցուիլ: Իսկութեան մէջ բոլորս ալ կ'ուզենք հասկցուիլ: Ամէն մարդ, ամուսնացած ըլլալ կամ ո՛չ, կ'ուզէ հասկցուած ըլլալ ուրիշներու կողմէ, որքան կարելի է խորապէս եւ ամբողջութեամբ: Բոլորս ալ այդ կարծիքով ծնած ենք եւ այնպէս կը թուի, թէ այդ պահանջը պիտի չչքանայ երբեք: Տկար եւ խուսափոխական խօսք է ըսելը, թէ մենք զիրար չենք կրնար հասկնալ: Մենք կրնանք եւ պէտք է հասկնանք: Թերեւս այդ մէկը ժամանակի կը կարօտի: Ժամանակ՝ իրարու ներկայութեան մէջ գտնուելու, հարցումներ հարցնելու, զիրար ուշադրութեամբ մտիկ ընելու: Շատ պարզ է եւ նոյնպէս երբեմն շատ դժուար: Անշուշտ ոչ ոք կրնայ իր դիմացինին հոգիին խորհրդաւորութիւնը ամբողջութեամբ հասկընալ: Սակայն կրնանք ամէն օր նոր բան մը սորվիլ: Իմաստուն առակագիրը հասկացողութիւնը կը կոչէ «կեանքի աղբիւր» (Առակ. 16:22), խորունկ իմաստութեան աղբիւր մը բոլոր անոնց համար, որ զայն կը փնտռեն: Հասկնալը ժամանակի կը կարօտի եւ ամենէն թանկագին նուէրներէն մէկն է, որ կրնանք ուրիշներու տալ: Որքան ժամանակ տրամադրելը մեր շուրջիներուն ցոյց կուտայ մեր գանձը սիրելու չափը: «ՄՏԻՎ ԸՆԵԼԸ ԲԱՉ ՊՈՒՌ ՄԵՆ Է ԸՍԱԿԱՆՈՒ ԸՍՄԱՐ»:

ԽՆԿԱՄԱՆ



Խնկարգութեան առաջ, սարկաւազը բուրվաոր ձեռքին, կը մօտենայ աւագերեցին, ժամասացին կամ եկեղեցական արարողութեան հանդիսապետող հոգեւորականին եւ խունկը օրհնել կու տայ: Խնկամանին մէջ փոքր դգալ մը կը գտնուի օրհնուած խունկը բուրվաորին մէջ դնելու համար:

Խնկամաններ կրնան կափարիչ ունենալ կամ ոչ:

Խնկամաններ յաճախ կրնան արւեստի գործ ըլլալ՝ գարդարուած ֆանդակներով եւ հայ եկեղեցւոյ կաթողիկէներով: Այս երեսօթին կրնան ակամատես դառնալ, երբ այցելեմք մեր կաթողիկոսութեան գանձատունը:

ՀԱՍՅԷ.

ՃՐԱԳ ԸՄԲԱԹԱԹԵՐԹ - ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ - Bourj-Hammoud, P.O.Box 80810 -Tel/Fax:01-258300- facebook-ի էջ jcrak Նրազ թերթ



ԸՈՒ ԽՕՍԵՂ ԽՄ ՈՏԵՐՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՄ ԸԱԽԻՂՏԵՐՈՒՄ ԼՈՅՍ (Ս, 119-105)

ԺԴ. ՏԱՐԻ

ԿԻՐԱԿԻ, 3 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2021

ԹԻԻ 40

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԱԾԱՇՆՉԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ ԵՍ. 17. 7-14: Բ. Կր. 13.5-13: ՅԻՍՈՒՄ ԸՐԻՍՏՈՍԻ ԱԲԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՍԱՐԿՈՍԻ 11.27-33

ՅԻՍՈՒՄ ԸՐԻՍՏՈՍԻ ԱԲԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՍԱՐԿՈՍԻ 11.27-33

Յիսուս եւ իր աշակերտները դարձեալ Նրուսաղէմ եկան:

Մինչ Յիսուս տաճարին մէջ կը պտըտէր, իրեն մօտեցան ֆահանայապետները, օրէնքի ուսուցիչներն ու երէցները եւ հարցուցին. «Ի՞նչ իշխանութեամբ կը կատարես այս բաները: Ո՞վ քեզի այդ իշխանութիւնը տուաւ»:

Յիսուս անոնց պատասխանեց. «Լա՛ւ, ձեզի պիտի ըսեմ՝ թէ ինչ իշխանութեամբ կ'ընեմ ասոնք, եթէ դուք ալ իմ հարցումիս պատասխանէք: Յովհաննէսի մկրտելու իշխանութիւնը Աստուծմէ՞ տրուած էր իրեն՝ թէ՞ մարդոցմէ: Պատասխանեցէ՛ք տեսնենք»:

Անոնք սկսան իրարու միջեւ խորհիլ եւ ըսել. «Եթէ ըսենք՝ Աստուծմէ տրուած էր, մեզի պիտի ըսէ ինչո՞ւ չհաւատացիք իրեն, իսկ մարդոցմէ էր չենք կրնար ըսել»: Այսպէս կ'ըսէին՝ ժողովուրդէն վախճալով, որովհետեւ ամէն մարդ գիտէր, թէ Յովհաննէս մշմարտապէս մարգարէ էր: Ուստի պատասխանեցին Յիսուսի. «Ձեմէ՛ գիտեք»:

Յիսուս ալ իրենց հարցումին պատասխանելով ըսաւ. «Այն ատեն ես ալ ձեզի չեմ ըսեր, թէ ի՞նչ իշխանութեամբ կ'ընեմ այս բաները»:

ԽԱՂԱՂ ԿԵԱՆՔ ԽՆԻՐԵԼՈՒ ԱՂՕՐՔ

Կեանքի առաջնորդող եւ խաղաղութիւն պարգեւող մեր Աստուածը, Քրիստո՛ս, դո՛ւն առաջնորդէ՛ մեզ, որպէսզի արդարութեան քու ճամբաներէդ քայլենք եւ քու ողորմութեամբդ՝ խաղաղութեամբ հասնինք կեանքի եւ փրկութեան նաւահանգիստը, որովհետեւ դո՛ւն ես մեր օգնականն ու փրկիչը: Քեզի՛ կը վայելեն փառքը, իշխանութիւնն ու պատիւը, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից:

ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

ՍՐԲՈՑ ԵՕԹԱՆԱՍՈՒՆ ԵՒ ԵՐԿՈՒ ԱՇԱԿԵՐՏԱՅՆ ՔՐԻՍՏՈՍԻ



Տասներկու աշակերտներու կողմից, Յիսուս նաեւ կ'ընտրէ 72 աշակերտներ եւ կու տայ անոնց նոյն իշխանութիւնը, զոր տուած էր իր տասներկու աշակերտներուն, աւետարանը քարոզելու, դեւեր հանելու եւ հիւանդներ բժշկելու:

72 աշակերտներուն անունները որեւէ տեղ չեն յիշուիր, սակայն անոնք եւս Քրիստոսի կողմէ առաքելութեան կը դրկուին զանազան շրջաններ:

Տասներկու առաքելներու եւ 72 աշակերտներու նախատիպը կը գտնենք Հին Կտակարանին մէջ, երբ եբրայեցի ժողովուրդը անապատային թափառումներու ընթացքին կը հասնին Եդիմ, այնտեղ կը գտնեն 12 աղբիւրներ եւ 72 արմաւենիներ եւ այնտեղ բնակութիւն կը հաստատեն (տե՛ս Ելք. 15.27):

ՈՍԿԵՂԷՆ ԽՕՍԲ

Անդադար Տէրը պիտի օրհնաբանեմ: Անոր օրհներգութիւնը շրթներուս վրայ պիտի ըլլայ շարունակ: Տէրն է միակ պարծանքս: Թող տառապեալները լսեն եւ ուրախանան:

Սաղմոս 34.1-2

ՍՐԲՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ ԽՐԱՏ
Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻԶ

Երբեք մի՛ ունենաք խարդախութիւն եւ կեղծաւոր խորհուրդներ, անհաւատ ու անսուրբ վարք, որոնք կորուստի պատճառ են: Այլ միշտ ձեր հոգիներուն մէջ կրեցէ՛ք լուսաւոր սրբութիւնը անբիծ սիրոյ երախտիքներով՝ ծաղկելով առաքինասէր վարքով եւ պսակուելով յաւիտենական յոյսով ի գովեստ Աստուծոյ փառքին:

Քանզի Հոգիի կրակով անարատ սրբութեան հասնելու Ամենասուրբ երրորդութեան օթեանը կ'ըլլանք երկրի վրայ: Որովհետեւ բոլոր սրբորանքներու եւ առաքինութիւններու զարդը տեսանելի ու անտեսանելի՝ Հոգիի եւ մարմնի սրբութիւնն է:

Ամենայն արդարութեան, արիութեան թագը եւ պարծանքներու պսակը միշտ սրբութիւնն է, նաեւ երկնաւորներու ու երկրաւորներու բոլոր դասերու փառքը, պատիւն ու մեծարանքը սրբութիւնն է, որ կը մօտեցնէ եւ հարազատ կը դարձնէ Քրիստոսի՝ մեր Աստուծոյն եւ բոլոր երկնային զօրքերուն:

ՍԻՐԵԼ ԲԱՐԵԿԱՄԸ ԵՒ ՕԳՏԱԿԱՐ ԴԱՌՆԱԼ ԱՆՈՐ

Երբ հնարաւորութիւն ունիս կարօտեալին օգնելու՝ մի՛ տնտնար:

Եթէ կրնաս բարիք գործել, մի՛ ըսեր. «Գնա՛, վաղը եկո՛ւր, կու տամ», որովհետեւ չես գիտեր, թէ վաղը ինչ կը պատահի քեզի:

(Առակաց 3:27-28)

ՀՈԳԵՒՈՐ ՊԱՏԳԱՍ

ԿՈՎՋԻՆ ՕՁԸ՝ ՍԱՏԱՆԱՆ

«Տէր Աստուծոյ ըրած դաշտի բոլոր գազաններէն աւելի խորամանկ էր օձը» (Մնն. 3.1): Հոս յիշուած օձը Սատանան ինքն է: Ասոր փաստը կը զրտնենք Յայտնութեան գիրքին մէջ. «Անիկա բունց վիշապը, այն առաջին օձը, որ Բանասրկուն է Սատանան է» (Յյտ. 20.1-2, տես նաեւ 12.9): Ինչո՞ւ Սատանան օձի կերպարանքով կը ներկայացուի: Գիտենք, որ Սատանան Արուսեակ անունով քերովբէ մըն էր նախապէս, որ փորձեց Աստուծոյ փառքը յափշտակել բայց չյաջողեցաւ (Ես. 14.12-15): Գիտենք նաեւ, որ քերովբէներն ու սերովբէները եւ երկնային բոլոր մարմինները թեւաւոր կ'ըլլան (Ես. 6.2): Արդ, Աստուածաշունչը կը խօսի թեւաւոր կիզող օձի մասին (Ես. 14.29): Հոս յիշուած թեւաւոր օձը Սատանային ակնարկութիւն է, որովհետեւ օձերու իրակասութեան մէջ թեւաւոր օձ չէ եղած եւ չկայ:

ՄԵՐ ՍՈՐՎԵԼ ԻՔ ՀՈԳԵՒՈՐ ԴԱՍԸ

Արուսեակը իր մեղանչելէն ետք պահեց իր թելերը, բայց տգեղցաւ եւ օձի կերպարանք ստացաւ: Սա ցոյց կու տայ, որ մեղանչելը կը տգեղցնէ մեզ, թէ ներքնապէս եւ թէ արտաքնապէս: Տէ՛ր, միշտ օգնական եւ պաշտպան եղի՛ր հաւատացեալներուն:

ԵԹԷ ԿԱՍ ԵՐԲ Կ՛ՈՒՉԵՍ...

ԵԹԷ ԻՆՔՉԻՆՔԻ ԿԱՏՈՒԾՈՅ Կ՛ՈՒՉԵՍ ՅԱՆՁՆԵԼ, ԿԱՐԿԱ՛Ք՝ Սաղմոս 37

Սիրտդ, մի՛ նեղեր չարերուն համար, ո՛չ ալ նախանձէ անօրէն մարդոց, որովհետեւ անոնք շուտով պիտի խամրին խոտի պէս, պիտի չորանան այնպէս՝ ինչպէս դալար լոյսը կը չորնայ:

Տիրոջ վստահէ եւ բարիք ըրէ, որպէսզի երկրի վրայ ապրիս եւ ապահովութիւն վայելես: Միակ ուրախութիւնդ Տէրը թող ըլլայ, եւ ինք սրտիդ բոլոր բաղձանքները պիտի տայ: Քու կեանքդ Տիրոջ յանձնէ, եւ վստահ եղի՛ր, ան ամէն ինչ պիտի տնօրինէ: Յերեկի պէս պիտի շողացնէ արդարութիւնդ, իրաւունքդ՝ կէսօրուան արեւուն պէս: Լռութեամբ հնազանդէ՛ Տիրոջ, սիրտդ մի՛ նեղեր անոնց համար, որ անիրաւ յաջողութեան կը հասնին, եւ անոնց համար, որոնք չարիք կը նիւթեն: Չսպէ՛ բարկութիւնդ, մէկ կո՛ղմ դիր զայրոյթդ, սիրտդ մի՛ նեղեր, որպէսզի դուն ալ չարիք չգործես: Որովհետեւ չարագործները շուտով պիտի կորսուին, մի՛նդեռ Տիրոջ վստահողները երկիրը պիտի ժառանգեն: Ժամանակ մը ետք՝ ամբարիշտը ա՛լ գոյութիւն պիտի չունենայ: Որքան ալ փնտռես՝ անոր հետքն իսկ պիտի չգտնես: Բայց հեզերը պիտի ժառանգեն երկիրը, եւ կատարեալ խաղաղութիւն պիտի վայելեն: Ամբարիշտը արդարին դէմ դաւ կը նիւթէ՝ անոր դէմ իր ակռաները կը ճտնելով: Տէրը կը ծիծաղի անոր վրայ, որովհետեւ գիտէ, թէ մօտ է անոր կորուստի օրը: Ամբարիշտները իրենց սուրերը կը քաշեն, իրենց աղեղները կը լարեն՝ նետահարելու համար աղքատն ու չքաւորը, սպաննելու համար ուղիղ վարքով ապրողները: